

ԱՐԱՄ ՊՆԱՅԻՆ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՓՈՐՁ

(ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՇՏԵՅՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՎԻ
ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ)

32(47.925)

Հայաստան ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Ազգային պետական
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳՎԱՐԱԴԱՏԵՐԻ

ԱՐԱՄ ԱՆԱՑԱՆ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ

ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ

6310 (ԹՈՒՐՀ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՇՏԵՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ)

ԼՐԱՎԱՐԵ

2003

ՀՏԴ 327 + 941 (479.25)

ԳՄԴ 66.4 + 63.3 (2Հ)

Ա 573

Աշխատությունը հրատարակության է երաշխափորվել
Հայոց գեղասպանության բանօրան-ինստիտուտի գլուխական
խորիոդի որոշմանը

Խմբագիր՝ Լ. Ա. ԲԱՐՄԱՆՅԱՆ

Ա 573 Անանյան Արամ – Հայ-բորբական Երկխոսության նոր
փորձ (Թուրք-հայկական համձնաժողովի գործունեության
մասին) – Եր., ՀՀ ԳԱԱ, Հայոց գեղասպանության
բանօրան-ինստիտուտ, 2003, 154 էջ:

Գրքում առաջին անգամ համապարփակորնեն ներկա-
յացվում են Թուրք-հայկական հաշտեցման համձնաժողովի
ձևակորման և զարգացման գործքմքացները։ Աշխատությունն
անդրադառնում նաև հայ-բորբական Երկխոսության խնդիր-
ներին։

Ա 0802000000
0176 (01) – 2003 ԳՄԴ 66.4 + 63.3 (2Հ)
2003

ISBN 99930-888-5-4

© ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա
Հայոց գեղասպանության բանօրան-ինստիտուտ, 2003

ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱՑԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՒՐՎԱԳԻԾԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԽԱՀՀ-ի վկուգումից հետո անկախ պետականությունն
վերականցնած Հայաստանի Հանրապետությունը վերածվեց
միջազգային հարաբերությունների լիիրավ սուրյենկով։ անկա-
խության տասնամյակն ամփոփելով՝ վստահորեն կարենի է ար-
ձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունը լիովին ին-
տելրովէ և միջազգային հանրությանը։ Տրամադրության հակա-
ռական է, սակայն, Թուրքիայի հետ հարաբերությունների զար-
գացման հիմնամիակն, որը բնորազոր միակ եզրը պաշտոնա-
կան հարաբերությունների բացակայությունն է։

Ի սկզբանե անկախության ընտրախավը հանդիս
ներկա հարևան պետությունների հետ բարիքացիական հարա-
բերությունների հաստատման կարևորությունը ապացուող և
հաշտեցման կոչ անող հայտարարություններով, սակայն այս
մոտեցումը շղթացավ պատմության բնորության՝ բախվելով
հարևանների անգիտու դիրքորոշություններին։

Արդեն 1991-ից Հայաստանի արտաքին քաղաքակա-
նության ստացնայնությունը, մեր կարծիքով, նոյն է և մասուն է
տարածաշրջանուն սեփական դերի ծզզորությն ու անվտանգ
կենսամիջավայրի պահպանությունը։ Վեստ 1997-ին, սահմանելով
Հայաստանի անվտանգության օրակարգը, ԱԳ ճնշումին ա-
ռաջին փախարարության ներկայությամբ ներկայում ԱԳ ճնշումին ա-
ռաջին Օսկանյանը նշում է Հայաստանի հարևան Երկրների
հետ բարիքացիական հարաբերությունների հաստատման
կարևորությունը՝ ներկայացնելով արտաքին քաղաքականու-
թյան և անվտանգության շափորչիները¹։ Արտաքին քաղա-
քականության հաջողվածության կարևորագույն շափորչինե-
րից մենք անմիջական արևմտյան հարևանի՝ Թուրքիայի հետ
հարաբերությունների արմարությն է։ Զեայած խնդրի կարև-
որությունը՝ ցայսօր հայ-բորբական հարաբերությունների ու-
ստանականության որևէ համապարփակ քայլ չկատարվել ոչ

1 Անվիտ համապարփակ տես' V. Oskanyan, "New Security Agenda for Armenia", *Transition*, 1997, September, N 1, vol. 4.

որպես վերլուծության, ոչ կ փաստագրական հետազոտության առողջությունը և սույն ի իմանախնդիրը կարու է իր ուսումնասիրողին²:

Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունները պետք է դիտարկել ենուևայ առանցքային դրույթների հաճատերառություն:

- **Քաղաքական և միջազնական հարաբերությունների բացակայություն**

Հայաստանը ու Թուրքիան շատեւ դիմունագիտական հարաբերություններ, իսկ Անկարան նաև ընտանին առնչություններ բացագանձնություն բացական կամ (հանենայն դեպքում բաց բորբագագանձնությունը): Կան կողմը բազմից հայտարարել է իր նախապայմանները:

- **Աշխարհաբարգարական և անվտանգության հայեցակարգերի տարրերություն**

Թուրքիայի աշխարհաբարգարական շահերը հակասում են Հայաստանի ազգային-պետականության գոյապայքարի բնույթին. բորբագանձնությունը աշխարհաբարգարականության վեկորը հական դիր է հայոց շահերին: Նա մշտական ուղղական սպառակիր է, ստեղծում Հայաստանի համար, մերժում է արցանահայության ինքնորոշման գաղափարը և Արցախի հարցի լուծումը (տեսնության դեպքում այն, որպես Հայոց հայրենիքի մի թեկողը Ալբեդանին հանձնելու տարրերակ) զնում երկվողդ հարաբերությունների կարգավորման հիմքում:

- **Պատամական ենթախորք և 1915թ. ցեղասպանության միջազգին ճանաչում**

Թուրքիան հրաժարվում է ճանաչել 1915թ. Օսմանյան կայսրությունում կատարված հայերի ցեղասպանությունը: Թուրք պետական բաղարականությունն ուղղված է ցեղասպանության փաստի համակրթմանի ժխտմանը:

- **Առևտրատնտեսական շփումներ**

Շնայած բաղարական հարաբերությունների բացակայությանը՝ միաժամանակ առաջարկությունները ծավալի են նոր՝ Թուրքիայի և Հայաստանի գործարարները ծավալի են նոր՝ Թուրքիայի և Հայաստանի գործարարները ծավալի:

առևտրատնտեսական նկատելի գործակցություն:

- **Կիբառպաշտոնական և հասարակական շփումներ**

Պետական պաշտոնական շփումների բացակայությունը հանգեցրեց այն բանին, որ Երկու կողմերից կ Երկխոսության պահանջմունքը գլխավոտուցում են հասարակական և կիսապաշտօնական շփումները:

Հայաստանի անկախացումը համընկալ նաև Թուրքիայի արտաքին բաղարական ակտիվության նոր շրջանի հետ: Ուշագրավ է, որ Թուրքիան Հայաստանի անկախությունը ճանաչեց պետականության կայացման կարևորագույն փոլում՝ 1991թ. դեկտեմբերի 16-ին, սակայն հապաղեց դիմանագիտական հարաբերություններ հաստատել: Դեռևս 1980-ականների վերցին Հայաստանի նոր բաղարական ընտրախսկի փորձեց վերագնահատել բորբ-հայկական հարաբերությունների բնկարում: Հայաստանի նոր զեկավարությունը, ցանալով դուրս գալ Մովսիսյանի բաղարական վերահսկողությունից, առաջարկում էր արևելամետն կողմնորոշչենքը:

ՀՀԸ բարչակարգը պահպանի կողմերի համարում էր բաղարական դերն ու հշանակությունների կողոքած և անվտանգ զարգացման առաջարկություն՝: 1991թ. ապրիլին Լևոն Տեր-Մետրոսյանը, Երևանում ընդունելով Մովսիսյան Թուրքիայի դեսպան Վուրափին, ասաց. «ԽՍՀՄ-ը փոփոխությունների է ենթարկվում: Ուզում ենք բարեկամանալ: Պատրաստ ենք ամեն տեսակի փոխահավետ համագործակցության»⁴: Հենց Վուրափի ենտ հանդիպման ժամանակ է նախարարչւեցին Երկու պետությունների կողմից հարաբերությունները: Եթե Հայաստանի համար Երկողդ հարաբերությունները բաղարական օրակարգում առաջնային էին տնտեսական կապերի աշխատացման խնդիրները, բորբագանձնությունների ժամանակակից տեսարյան համար՝ նոր միջազգային հարաբերությունների ժամանակակից տեսարյան համար: Մերձակայի և Մթիշին Արևելի Երկիրներ և ժողովրդություններ, հատուր XXI, Երևան, 2002, էջ 147-155:

¹ Խնդրա առարկայի մասին ամելի հանգամանայի անս Ռ. Սաֆրաստյան, Հայ-բարբարական հարաբերությունների ուսումնասիրության հշանակությունը՝ միջազգային հարաբերությունների ժամանակակից տեսարյան համար: Առձակաց և Մթիշին Արևելի Երկիրներ և ժողովրդություններ, հատուր XXI, Երևան, 2002, էջ 147-155:

² Հայաստանի Հանրապետության, 28/11/1990:

³ Ազգ. 30/05/2002:

հարցերը⁵: Հայ-բուրքական հարաբերությունների կարգավորման տերպետուսայանական վարչակարգի տեսականը ուրվագծվում էր ավելի խսավոր ինքը վրա՝ Հայոց ցեղասպանության հարցում հարաբերությունների համաթերառությունը՝ չըստ արձարձենը՝ այն համարվելու էր Սփյուռքի գործունեության ուժը:

Անկարան, իր հերթին, Հայաստանի հետ պաշտոնական հարաբերություններ սկսելու համար առաջ էր քաշում նախապայմանների մի ամրող ցուցակ, որնց բավարարությունը իրաւուսական չէր. չիշխատակի Հայոց ցեղասպանությունը, պաշտոնապես իրաժարվել պահանջարկությունից. կասեցնել սփյուռքահայության հակարութքական գործունեությունը. ստիպել ԼՂ հանրապետության ննդունել Ազրբաջանի գերիշխանությունը, հայկական զորքերը դուռ ընթել «գրավյար» տարածքներից՝ ներառյալ Ծովշին և Լաշինը, փոխանակել Սեղմին Լաշինի հետ⁶. Թորքական հասարակության մի մասն է, ի դեմս ապագա արտօրծախարար Ենամայի Զեմի. Հայաստանի կողմից ցեղասպանության հարցի՝ գոտոսայլ քրիստոնեական պետության» իմբիջ շահարկումը համարում էր Արևոտքից օժանդակություն ստանալու միջոց⁷:

Անկախության մկրնական փուլում պաշտոնական երևանը Թորքիայի նկատմամբ վարում էր զգուշափոր քաղաքականություն, որի պատճառներից կարենի է համարել երկրի անկայուն վիճակն ու անվտանգության երաշխիքների բացակայությունը⁸. Միաժամանակ Թորքական կողմը, թեև առանց ոզերության պարերարար հանդիպում էր Հայաստանի բարձրաստիճան դեկանարարության հետ: Հանդիպումների լուսաբանությունը մասունքում ավելի քան մշուշու էր⁹:

⁵ Ռ. Սաֆրաստյան, «Հնարապետ չէ 21-դարում պատճեններ ստուգել հարևանների միջև...», Երևան, 2003, էջ 39:

⁶ Հայկական Ժամանակ, 18/07/2002:

⁷ Է. Կոմ: Gelecek İçin Denemeler, İstanbul, 2000, s. 102.

⁸ Ա. Սպահանն, «Նարաբայան իրմանացը և Հայաստանի ուղղակի անվտանգությունը», Երևան, 1998, էջ 33:

⁹ N. and H. Pope, Turkey Unveiled, New York, 1997, pp. 292-294.

Անկարայի և Երևանի միջև հարաբերությունների հաստատման վրա ազդող կարևորագույն գործունենքը էին ԼՂ-ի տարածություն հայկական զինված ուժերի հաջողությունները և Ազրբաջանուն բուրքամեան Արության Էջիրեյի կողմից նախագահի արող գրադարձնելը: Ազրբաջանի հետ ձևոր-ձևորի տված Թորքիան շրջափակել էր Հայաստանը:

Արդեն 1992-93-ի ձմռանը Արևմոտքի ճնշման տակ Թորքիան ստիպված եղավ անժմանակ բացել սահմանը մարդասիրական բնաների համար, չնայած դնել դեկտեմբերից ողբակիություն ենթափափած էր Ղարաբաղյան հակամարտության մեջ¹⁰: Թորքիան ինչպիսի դրամություն բացահայտ էր պահանջան գրավյար 1993թ. սարիին Քարվանսահության շրջանում ԼՂՀ պաշտպանության բանակի իրականացրած կայծականացին ազատագրության գործողությունից հետո, երբ պատերազմը փխադրվեց հակառակորդի տարածք Թորքիայի նախագահ Թորգուր Օզալը խախտեց միջազգային իրավունքի՝ ուժ և ուժի կլարտման սպառնալիքի բացառելու մասին իրմանարար նորմերը: Եթե բուրքական հայտարարություններն, ի մկրանն, պահանջում էին ևս քաշել առաջ շարժվող Արցախի բանակը, ապա հետագայում Օզալի սպառնալիք արտահայտությունը՝ տարածված աշխարհի ստացածար լրատվակիոնների կողմից, անսրող նարտահարավեր էր Հայաստանի: «Հայերը չեն ստիպել Անառողիայի փորձառության իրենց դասը և այն պատիքը, որ ստուգել են»: Այս հայտարարությանը զումարվեցին «Հայաստանին ատամներ ցույց տալու» և «Կիպրոսյան տարբերակը» շքացանու սպառնալիքները¹¹: Օզալի բորբ այլ բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները հանդիսանում են միջազգային իրավունքի կողին խախտում և խաղաղության դեմ հանցագործություն: Դրանք հակառակ են միջազգային կողմից լույսունակ ընդունված իրմանական նորմերին, ի մասնավորի ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ

¹⁰ Nagorno Karabakh Conflict: Some Facts, Geneva, 1995, էջ 6.

¹¹ Star Reuter 4/5/1993, UPI 4/7/93, 4/7/93, Agence Freace Press, 4/3/93, 4/6/93, 4/9/93, 4/15/93, Anadolu Ajansi 4/3/93, 4/5/93 և այլն:

հոդվածի 4-րդ կետին, ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն պետությունների բարեկամության և համագործակցության միջազգային իրավունքի սկզբունքների մասին հայտարարությանը (1970 հոկտեմբերի 24), ԵԱՀԽ-ի նօրակալիչ ակոփ առաջին մասի երկրորդ կետին և այլն¹²: Ցափոք ցայսօր Թուրքիայի այդ քայլուր միջազգային իրավական գնահատականի շեն արձանացնելու: Միևնույն ժամանակ հայ-բորբական սահմանում սկսվեցին զորաշարժեր. որոց զնահատականների համաձայն հայ-բորբական սահմանին շորով կոստակած զորքի թիվն անզամ այսօր հասնում է 200 հազար զինվորի¹³:

Թշնամանքի մեկ այլ դրսուրումը ցանկացած տեսակի թեոների մոտար Հայաստան արգելելու բորբական կառավարող շրջանակների որոշումն էր: Թուրքիայի քաղաքական նման փարք մեկ անգամ և վկայում է այն նախն, որ Ղարաբաղյան հակամարտությանը նրա վերաբերմանը ոչ թե «օքրորդ կողմին» քայլեր են այլ ներգրավված պետություն: Եր բացասական դիրքորոշումն Անկարայի ուսամշայուն հայտարարությունների շրջաը արտասահմանե նաև ԱՊՀ կոլեկտիվ անվտանգության ուժերի գլխավոր շտաբի պետ մարշալ Շապոշնիկովը, որի հայտարարությունն առ այն, որ Թուրքիայի Հայաստան ներխուժումը նշանակում են ոչ այլ ինչ քան երրորդ աշխարհամարտ, զայեցին հարձակողական ախտործակը և շնայած իր ամպազոռող հայտարարություններին, Անկարան ստիպված եղավ հաշվի նույն տարածաշրջանում հաստատված ուժերի նոր դասավորության հետ: Թուրք քաղաքական գործիքները հասկացան, որ աշխարհաքաղաքական հավասարակշռությունը կովկասում վիխվում է: Հայաստանի տարածքային անբողջականությունն ու ինքնիշխանությունը խախտելու մյուս փարձը բվագրվում է նույն 1993 թվականի սեպտեմբերով, երբ Մոսկավյուն բոնկված պետական հեղաշրջման պարագալով, խորիդարանի խոսնակ Խարբուլատովը զալտնի բանակցությունների բարեկաման

թյունների մեջ մտնելով Թուրքիայի հետ, որպես բաղաքական աշխակցության հատուցում խոստացել էր չեզորություն, երև բարբական կողմը փորձի ներխուժել Հայաստան և Վրաստան¹⁴: Թուրքիայի կողմից խազմական վտանգի մասին խոսելու անհրաժեշտ է հիշատակել, որ 2001թ. հոկտեմբերին Երևանում անցկացված «Քաղաքացիական և զինվորական իշխանությունների փոխարարքություններն ազգային անվտանգության ծրագրման գործընթացում» սեմինարի ընթացքում «Համանակակից մարտուհրավերներն ու ՀՀ-ում ազգային անվտանգության ծրագրման գործընթացը» իր ելույթում պաշտպանության փոխնախարար Արքուր Աղարեկյանը նշեց, որ մեր երկիրը առայժմ չունի ազգային անվտանգության վերաբերյալ անդրոցական փաստարություն: Պաշտպանության փոխնախարարը նշեց, որ Հայաստանի ազգային անվտանգության սպառավուժիքները բացատրեն արտաքին նեն: Այս առողմով Ա. Աղարեկյանը շենուած Թուրքիայի և Ադրբեյջանի գործուները: Նա փոխանցեց, որ երես Ադրբեյջանը պատերազմ հայտարարի լ. Դ. ին, այդպիսով պատերազմ կհայտարարի Հայաստանին: Ինչ վերաբերում է Թուրքիային՝ «Հայաստանը շատ խնդիրներ ունի այդ երկիրի հետ: Բայց մենք բազմից հայտարարել ենք նրա հետ դիմանագիտական հարաբերություններ հաստատելու սահմանները բացելու անհրաժեշտությունը, ինչն անարձագուն է, մնան Թուրքիայի կողմից»¹⁵: Նոյն համովագման ժամանակ նշվեց, որ չնայած ընդայսվող ՆԱՏՕ-Հայաստան համագործակցության 1998-ից սկսած Թուրքիան Հայաստանը համարում է, իր համար երկու քշնամին (այս ցուցակում ստացին երիդոնականը Հունաստանին է, որն ի դեպ նույնպես ՆԱՏՕ-ի անդամ է):¹⁶

Հայ-բորբական հարաբերությունների բարեկաման

¹⁴ Հայրական Ժամանակ, 18/09/2002:

¹⁵ Ազգ, 10/31/2001:

¹⁶ Արմենիա, 30/10/2001, Տեղեկատվական գործակադրությունների նյութերը թույլատ են համացանցից, այս իսկ պատճառով եղան ենք հայկական անվտանգական գործակադրությունների համացանցային կայքերը, <http://www.arminfo.am>:

¹² Հայդուրալուս Право в Документах, Москва, 2000, стр. 16-17, 26.

¹³ St's 'n The Military Balance, 1995-1996, London, իմշան նաև Ա. Սերբիան, Թուրքիայի զինված ուժերի օսկրատիկ և մարտուհրական պատրաստությունը, Հայրական բանակ 2, 1996թ.:

փրա ազդեցուրյուն չունեցավ անգամ 1994-ի մայիսին Մոսկվայում կերպած զինադադարը Լեռնային Ղարաբաղի հականարտուրյան խաղաղ կարգավորման վերաբերյալ, պակին՝ Թուրքիան գագաղով, որ դորս է մնացել հարցի կարգավորման գործընթացից, շփոխեց Հայաստանի նկատմամբ իր դիրքորոշումը: Երկողության շփոխմների ակտիվացնանքը շնպատեց անգամ 1994թ. դեկտեմբերին Հայ հեղափոխական դաշնակցուրյուն կուսակցուրյան գործներումն արգելելու Հայաստանի Հանրապետուրյան նախագահի միանձնյա որոշումը, որը բարեկամական բայ և քաղաքական գիշում¹⁷: Դաշնակցուրյունը Թուրքիայում մշտական բնկավիլ է որպես հայ հասարակուրյան ամենահակարուրքական ոժը:

1993 թվականից Թուրքիան հայաստանյան իշխանություններին հետևողականորեն սկսեց մեղադրել Քրդական քանվորական կոսակցուրյան գիներու և պատապարելու մեջ: Հայկական կողմը եերքն և մինչև օրս էլ եերքու է Թուրքիայի կողմից պարբերաբար կրկնող այլպիսի սպառաները: Հարկ է նշել, որ նման հայուրաքարույրյաններն անսպատական բողնելը նշանակում էր Անբարյան մելե ավելի ակտիվ գործոդրությունների: 1994-ի հունվարին հայաստանյան արդարադատուրյունը ցուցադրաբար քավական խիստ վճիր կայացրեց մի խումը սահմանադատների նկատմամբ որոնք փորձել էին անցկացնել մի քանի միավոր թերև իրազեկ¹⁸:

1995-ի ապրիլին Հայաստանի իշխանությունները նոր դիվանագիտական քայլ արեցին Երկողության հարաբերությունների բարեկաման իրենց թնդապումը կյանքի կոչելու ուղղությամբ: 1915-ի Սև Եղեռնի 80-րդ տարեկիցին նվիրված միջազգային գիտաժողովի ամբիոնից նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ ցեղասպանուրյան մոտականան, պատրաստման և իրազորման ողջ պատասխանատվուրյունը թնկում է.

Մուրան Համիլի և Երիտրուրքերի վրա: Թուրքիայից չպահանջվեց պաշտոնավես ճանաչելու ցեղասպանությունը: Իր ելոյրում ճախսագահը հոյս էր հայտնում, որ Երկողության հարաբերություններում պիտի հաստատվի առողջ քանականության և բարձր բարյականության մրնություն: Այս հայտարարությունը մեր կարող միանշանակործն ընդունվել Հայաստանի և Սփյուռի բարյական և հասարակական ոտերը կրակի տակ ստան այս դիրքորոշումը, Տեր-Պետրոսյանի ստանց այն էլ անկում սարսու փարկանիցը շշանակիորեն նվազեց:

Սուսանալով «Քրորդ ուժի բացառման օրենքը» Հայաստանը ձգում էր չխորանարդ արևմտյան անվտանգության հստակարգի մեջ, քաղաքական և տնտեսական կառույցները բարեկավել Վերջինի մոտեցումներով և մերդներով: Յեղատպանության միջազգային ճանաշան եիմնահարցը չէր արձարծվում հայ-բորբական հարաբերությունների համատեսատում: 1995թ. հոկտեմբերին Մտամրության գոնվոր Հայաստանի Ազգային Ժողովի պատվիրակության ղեկավար, Խորենական միունքի Բարքեն Արարքյանը հատարարեց, որ Հայաստանը ցանկանում է դիվանագիտական և առևտուտնեսական բնականոն հարաբերությունները հաստատել Թուրքայի հետ: «Վերջինս անդամանք նման հարաբերությունները վերջ կը դնին տասնամյակներ ձգվող թշնամանքին ու անվտանգությանը: «Վերջին 70 տարեկին ընթացքում Հայաստանի և Թուրքիայի միջև կա պատ և Երևանը պատրաստ է այդ պատը բանելք»¹⁹: Արարքյանը կոչ արեց չպայմանագորել Երկողության հարաբերությունները այլ պետորյուններ հետ առնելի նմանիքներու: Միևնույն ժամանակ բորբական հականակական դիրքորոշումը և հայկական լորիտական խմբավորությունների գործնությունը սպասում էին 1996-ին ֆինանսական տարում Թուրքիային գիւղ ամերիկյան օգնությունից, սակայն նախագահ Քիմնքանը դևմ լինելով նմանօրինակ զարգացումներին կանխս կոնցընսականների նման նախամենությունը²⁰:

90-ականների կեսերին արդեն պարզ էր, որ հայ-բոր-

¹⁷ M. Tutuncu, Turkish Foreign Policy in the Caucasus, Helsinki 1997, էջ 276.

¹⁸ А. А. Куртов, А. М. Халмхамедов, Армения-Турция: Противостояние или Сотрудничество? "Армения: Проблемы независимого развития", Москва 1998, стр. 455.

¹⁹ Ա.Ա. Կորտով, Ա. Մ. Խալմխամեդով, նշվ. աշխ., սր. 455.

²⁰ Իմ յշ, սր. 456.

բական բաղարական հարաբերությունները մտել էին անհաղթահարելի փակուլի: Հայստանի Հանրապետությունը շխազողեց որևէ նոր և լորջ ծովացում՝ մշակել մրտված թուրքական կողմից հետ հարաբերությունների բարեխափանը: Նոյն փաստն արձանագրում է նաև Հայստանի Հանրապետության արտադիրների գործերի նախարար Վահան Փափաջանյանը: Նոր ծրագրության ամփոփիչ հոդվածում, նվիրված Հայստանի անկախ արտադիրների բարեխափանության հեռանյակին, նախարարը փաստում է, որ իրավան տեղաշարժեր այդ որրոտում չեն արձանագրվել²¹:

1996r. նախագահական ընտրությունների նախօտեին՝ սեպտեմբերի 12-ին Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարգեց, որ պաշտոնական Երևանը թուրքայի հետ հարաբերությունների տակին է մեծ նշանակություն, քանզի այն կարելու գործությունը և արարական աշխարհի հետ կապու ամենակարծուիլին²²: Հենարայիր է, որ ընտրություններից առաջ հայ-բորբական հարաբերությունների բարեխափումը բարձրացներ գործող նախագահի հեղինակությունն ու փարկանիշը: Նախագահական ընտրություններում Լևոն Տեր-Պետրոսյանի խայտառական «հաղորդանակը», ժողովրդավարության տակարգը, հասարակության և իշխանության ծայր աստիճան օտարացումը, ինչպես նաև ՇԱՀԿ-ի լիսարունյան զարգանածողությունը Հայստանի դիմանացիանության պարագաներունը ՀՀ վարչակարգի արտարկին և ներքին բաղարականության ծախտողուն էին:

Հայ-բորբական հարաբերությունների գարգացման առումով բորբական կողմից էր, որևէ քայլ ակնկալին անհնարի Անկարայի պաշտոնյաները հետևողականորեն խայտառություն ունեցաւ, որ Հայստանի հետ հարաբերությունների բարեխափումը հնարավոր է, միմիայն Աղյուսակի հետ Հայստանի բոլոր փետիք հարցերի կարգավորումից հետո²³: Նոյն համատեքստում էր նաև Սովետական Դամբրենի հայտարարությունը՝ արտում էր նաև Սովետական Դամբրենի հայտարարությունը՝

վաճ Կարսում, բաղարի գրավման 77-րդ տարեկանը տոնակատարություններին առ այն, որ հարաբերությունների բարեխափումը Հայստանի հետ սարելի ետևում է²⁴:

1998-ին տեղի ունեցած հիշանափոխության հետևանդույն անցկացված արտահետք նախագահական ընտրություններում Ուգրիս Ռուսայանի հարաբանակից հետո հայ-բորբական հարաբերություններում Երևանի դիմորոշման մեջ առաջ քաշվեց Հայոց ցեղասպանության խնդիրը, որը որոշ բոլոր բարեխափումներ բնորագրեցին որպես Թուրքիայի նկատմամբ Հայստանի բաղարականության կշշացում²⁵: Նոր նախագահը դրիմի երկիր նկատմամբ այլ բնկարությունների կողմնակից էր:

Նախագահ Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո փորձ արվեց Վերանայել հայ-բորբական հարաբերությունները, սակայն թուրքիան նոյն հաջողությամբ շարունակում է իր բաղարական գիծը, որքան էլ Հայստանի դիմորոշումը, զոնե ստերեոտիպ, լորջ փոխանություններ կրեց: Այս փոփոխության կարևորագույն կովանը Հայոց ցեղասպանության միջազգային նախաձնան և զատապատճան անհրաժեշտությունն է՝ իրողություն, որը միշտ շեշտվել է Հայստանի երկրորդ նախագահի կույրներում: 1998-ին հրապարակվ, առաջին անգամ ՄԱԿ-ի ամբիոնի Ռ. Քոչարյանը ասաց, «Օսմանյան կայությունում հայերի 1915 թվականի ցեղասպանությունը իր ժամանակին պատշաճ կերպով չղատապարտվեց Խանջջանարային հանրության կողմից, ինչը որոշ վարչակարգերի խրախուսուն նոր հանցագործություններ կատարելու Այս շաբթի դեմ պայքարի անհրաժեշտության հարածն ընդունումը մի շարք երկրների խորհրդարանների կողմից»²⁶.

Արդեն հաջորդ տարի նախագահ Քոչարյանը արձանագրում էր ցեղասպանության նախաձնան ուղղված ստաջին

²¹ Հայստանի Հանրապետություն, 15/09/1996:

²² Anadolu Ajansı, 09/12/96, Moskova.

²³ Независимая газета, 12/26/1996.

²⁴ Turkish Daily News, 10/13/1997.
²⁵ Այս մասին սեղի հսկամանից ան'ս, U. Çeviköz, Uluslararası İlişkileri yeni dengel, Ermənistan Özel Sayısı, TESEV, Agustos, 2001, s. 13:

²⁶ <http://news.president.am/arm/?sub=statements&year=1998&mode=1>

բայլերի հաջողությունները՝ նշելով, որ դրանով 20-րդ դարի սուաջին ոճի դատապարտմանը միտված ջանքերը չեն դադարելու: Այս բարզականության հաստատվածության մասին լր վկայում նաև ԵԱՀԿ ստամբուլյան գագարնաժողովում նախագահի ճանի ենթայալ հատկանիշ, որտեղ անդադառնարդի հայ-բորբական հարաբերությունների գարգաման ներառվությանը նախագահն նշեց: «Հարաբերություններում նոր էջ բացելու մեր ցանկությունը չի կարող իմանված լինել ընտրողական պատմական հիշողության կամ լիակատար ամենօքայի վրա: Մենք չենք կարող նոռանալ մեր ժողովով պատմության ողբերգական էջերը և ցեղասպանության նրա կրած ցափ: Բայց մենք նաև չենք ցանկանում մեր հարաբերությունների էկույունիան և մեր ընդհանուր պատման կախանածության մեջ զնիւ մեկնարանությունների հակասություններից: Մեզ անհրաժեշտ է գտնել խնդրի լուծման բանաձևը, իսկ դրա համար այն պետք է քննարկեն»²⁷: Նախագահի այս պիքորոշումը հետազոտյան է և մնաց անփոփոխ:²⁸ Սակայն Հայաստանի իշխանությունները Թուրքիայի հետ հարաբերությունների վերջին կամուրջները այլեւու ոչ մի ցանկություն չտնենի:

Անդադառնարկ երկողող հարաբերությունների գարգառության նշվում է, որ Թուրքիան ունի իր ենդազության մեծագույն քամինը Երևանի հետ երկստորագույն մերժելով: «Հայաստանի հարաբերությունները Թուրքիայի հետ մնում են վերջինիս անհիգնուլական աղբեկանամատն կեցածիք և Հայաստանի չարտունակվող լրջափակման պատասխողը: Մենք Թուրքիային կոչ ենք արել և շարունակում ենք կոչ ամել Հայաստանի հետ հարաբերություններ սկսել առանց նախապայմանների: 1915թ. հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու Թուրքիայի շարունակվող մերժումը մնում է Խողերանական և բարզական խոշնեղու, որը պետք է հարցանարի: ...Քանի որ Թուրքիան շարունակում է մերժել այդ անցյալը, մեր հաշ-

տեցումը մնում է անվաստահության պատաճք»²⁹:

Հընթաց բորբական հասարակությունը նոյնպես կարևորում էր հայկական պաշտպանական տեսակետի պարզաբնույթը, այս էր պատճառը, որ Ամերիկա-բորբական հեղինականությունը CNN-Türk հեռուստաալիքը հենց Հայաստանի նախագահից ուղղակիորեն փորձեց սուանալ հայ-բորբական հարաբերությունների մեջնարանությունը³⁰: Թորք լրագործը մասնակիությունը նոր ցանկանականության ճանաշման գործընթացի շարունականությամբ և վերջինս առաջ տանող ուժերով: Պատասխաններով այդ հարցին նախագահը նշեց, որ ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը աշխարհականություն հայության օրինական պահանջն է, իր իսկ հայությունները որպես հարցի շորջ Հայաստանի դիրքորոշման ծախութ: Ռ. Քոչարյանը նշեց, որ Հայաստանի և Միջուրի շաներերը Հայոց ցեղասպանության ճանաշման հարցում միևնույն ուղղարկեցները՝ ՀՀ նախագահը նշել էր նաև, որ «քեզ որեւ անձ կամ ազգ փորձում է իր արժանապատվորյունը պաշտպանել, որ պարտադիր կերպով պետք է ինչ-որ այլ կարգի հետևանքների ակնկալիքներով արվի», թև՝ արդին հենց ինը թուրքական արժարացնում է այս քայլը: Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ մեր հարաբերություններին, մենք հասկանում ենք, որ երկու պետությունների միջև այս հարաբերությունները ներսականության ճանաչումից հետո որևէ նոր կախվական հետևանքների չեն քերելու: Խոսքը դրա մասին չէ, որ այսօր աղբաբարյան վերականգնման հարց է, Հայաստանի Հանրապետության և անձամբ ինձ համար որ ավելի շատ արդյունավետ է: ՀՀ նախագահը նշել էր նաև, որ «քեզ որեւ անձ կամ ազգ փորձում է իր արժանապատվորյունը պաշտպանել, որ պարտադիր կերպով պետք է ինչ-որ այլ կարգի հետևանքների ակնկալիքներով արվի», թև՝ արդին հենց ինը թուրքական արժարացնում է այս քայլը: Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ մեր հարաբերություններին, մենք հասկանում ենք, որ երկու պետությունների միջև այս հարաբերությունները ներսականության ճանաչումից հետո որևէ նոր կախվական հետևանքների չեն քերելու: Խոսքը դրա մասին չէ, որ այսօր աղբաբարյան վերականգնման հարց է, Հայաստանի Հանրապետության և անձամբ ինձ համար որ ավելի շատ արդյունավետ է: Ես զիտեմ, որ Թուրքիայում կարծիք կա, որ

²⁷ Հայաստանի Ռ. Քոչարյանի կողմէը Ազգենտիմայի միջազգային հարաբերությունների խորհրդում, 06/05/2002:

<http://news.president.am/arm/?sub=statements>:

²⁸ Հայաստանի Ռ. Քոչարյանի հարցադրույցը CNN-Türk հեռուստաթագավորությանը, 29/01/2001:

<http://news.president.am/arm/?sub=press&year=2001&id=1&mode=1>:

Հայերի տեղում:

²⁹ Հայաստանի Հանրապետության կողմէը

³⁰ Ի՞նչպատճեն անձը անցյալը

<http://news.president.am/arm/?sub=statements&id=93&from=0&year=2002>:

Երևան հիմա Ֆեղասպանությունը ճանաչվի, ապա Հայաստանն անպայման տարածքային պահանջ է ներկայացնելու ժողովային... Թուրքիայի համար Ֆեղասպանության ճանաշուրջ Հայաստանի Հանրապետության նկատմամբ չի բերում իրավական հետևանքներին³²:

Հարցարդույթի ընթացքում նշեց, որ արդի միջազգային իրավունքի նորմերի համաձայն Հայաստանը Թուրքիայի նկատմամբ որևէ տարածքային պահանջներ չի կարող ունենալ: Ու Քոչարյանը նշեց, որ այդ հարցի բննարկումն առավել բարարականացված է՝ խորհուրդ տալով քորքերին առավել քանի հազիստ նայել այդ խնդրին:

Թուրքական բաղադրականության կարևոր բաղադրիչներից է նաև միջավայրական հարաբերությունների օրակարգի անընդհատ փոփոխությունը. ինչի պահանջով հայ-թուրքական հարաբերությունները կարգավորեն միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության փորձերը ենն սկզբից էլ դատապարտված էին: Միանգանայն պարզ է, որ Թուրքիայի արտաքին բաղադրական գերատեսչությունը մինչև վերջ հարգելու էր իր հայտարարած սկզբունքները:

* * *

Միջավայրական հարաբերությունների բացակայության պայմաններում նշանակալի կարևորություն են ստանում հասարակական մարմինները, որոնց ուշադրության կենտրոնը հայրերական հարաբերություններ են: Նմանօրինակ առաջին լուրջ նախաձեռնությունը և քորք-հայկական հարաբերություններում նշանակալի գերականացության արձանագրած կազմակերպությունը եղել է Թուրք-հայկական գործարարության գարզացման կոմիտեն (ԹՀԳԶԿ): Այն կիմնվել է 1997թ. մայիսի 3-ին և խնդիր էր դրել աջակցել Հայաստանի և Թուրքիայի գործարարների համագործակցությանը: Համաձայն կազմակերպության հիմքամյա գործներության գնկույցի՝ նրա խողովակները

բոլ են իրականացվել քորք-հայկական շփոմների 70%-ը³³: Թուրք հայկական գործարարության զարգացման կոմիտեն գտնում է, որ գործարար շփոմների միջոցով ներարար է հասնել երկու ժողովորդների միջև կատողողական և գործակցային մրնորդությ ծնավորման³⁴: Ի դեպք կազմակերպության հետարքը դրանակը տարածվում է տնտեսական և հասարակական տարբեր ոլորտների վրա: Իր առջև դրած թերթես ամենակարևոր խնդիրը կազմակերպությունը համարում էր Ալբանի-Երևան-Բաքու երկարգի գործարկություն: Գործարքներն առաջնային են համարում նաև TRACECA ծրագրի իրականացումը, ապատ առևտորի գոտու ստեղծումը, օդային հայորդակցության զարգացումն ու տարածաշրջանային արդյունաբերական ճյուղային համագործակցությունը (տերթափի, զյուղատնտեսական, տեխնկառավական տեխնոլոգիաներ, շինանյութերի արտադրություն, տուրիզմ և այլ բնագավառներում):

Թուրք-հայակական գործարարության զարգացման կոմիտեն աջակցություն է ցուցաբերում նաև մշակուրային համագործակցությանը՝ զիտական և ուսանողական շփոմներին: ԹՀԳԶԿ-ն փորձեց կազմակերպել քորք և հայ պատմաբանների փորում՝ պահպան պատմության խմբահարուց հարցեր ծովուր համար:

Կազմակերպության գործունեությունը կարելի բոլորացի որպես բարի ցանկություններ: Միանցանակ է, որ բաղադրական հարաբերությունների բացակայությունը շտահ համար գործարարների նախաձեռնությունները դնում է հարվածի տակ: Դեռևս 1998թ. վեստրվարի 13-ին, հանդիպելով Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հետ, կազմակերպության համանախազան Քանան Սոյակը հույս հայտնեց, որ ավելի ակտիվ տնտեսական շփոմները իրաւունական են դարձնում բաղադրական հաշոնցման հարաբերությունները³⁵: Հետազոտություն 1999-ի դեկտեմբերին, «Թորիչ դեյլի Նյույք» օրաթերթին տված հարցագրուցում, մակա-

³² TABDC activity Report 1997- Present, www.tabdc.org.

³³ Կոյոյի տեղում:

³⁴ Կոյոյի տեղում:

³⁵ Noyan Taron Newsline, 13/02/1998, <http://www.nt.am>

բանելով Հայաստան կատարած այցի արդյունքները, Սոյակը շեշտում է. «Հայաստանը ցանկանում է Թուրքիայի հետ ունենալ շերտ և բարեկամական հարաբերություններ»³⁷. Սյակ բարդ ջերմ և բարեկամական հարաբերությունները՝ ըստ Սոյակի, Հայոց ցեղասպանության բաց վերը է³⁸:

Ընդհանրապես բարդ է որոշակի գնահատուական տալ ԹՀՀ-ԴԿ-ի գործունեությանը, բանզի ոչ կատավարական կազմակերպությունների համար հեշտ չէ հայ-բորբական հարաբերությունների խոշոլութեամբ լուծման ուղիներ գտնել, այն պարզ պատճառով, որ վերջիններս բավականին զգային են աշխարհաբարական և դիվանագիտական ցանկացած փայրիվերամբների նկատմամբ:

Յայսօր չի սկսվել կազմակերպության առաջնային ծրագրերի իրականացումը, միանալության կիմներ կարծեց նաև, որ գործի իրականացումը, միանալության կիմներ կարծեց նաև, որ կառույցին կիաջողով միանալության հայեցնել երկրորդանին անհանդուրժության ասաույցը (2002թ. մարտի 28-ին Երևանում անցկացված ամերիկահար ուսահար ՈՒԽարոյ Հակոբյանի և անցկացված ամերիկահար ուսահար ՈՒԽարոյ Հակոբյանի և բորբական «Հ.աթեզար» խմբի համեմուր համեմվեց ՀՅԴ երիտրապահական թիվ անհամեներ հայուսուն կազմակերպած բարձր ակցիայով հենց համերգապահի առջև):

Առանձնակի մտահոգություն է հարուցում այն փաստը, որ ցեղասպանության հարցի շորջ հայ և բորբ պատմաբանների փորումի գաղափարը, որը թերևս բորբական «Հայոց ցեղասպանությունը պատմաբանների գործն է» հշանաբանի բոդրպական տարբերակն է: Հայ և բորբ պատմաբանների փորումի գաղափարը իրականացնելու փորձ կատարվեց 2002թ. ամռանը, սակայն այդ նախաձեռնությունը ծախտվեց:

2001թ. մարտի 10-ին ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օս- կանյանի և ԹՀԳ-ՁԿ համանախականների հետ ներքական հանդիպման ժամանակ նշելու էր, որ Հայաստանի արտարին գործերի գերատեսչությունը դեմ չէ Թուրքիայի արտօղքնախա- սար Դամային Զնիք առաջարկած Հայաստան-Ալբրեխան-Թուր-

բիա եռակողմ ֆորմատով հանդիպմանը³⁹: Սոյակ նախաձեռնությունը Զնիքը հանդիս էր թերել դեռևս 2001թ. հունվարի 17-ին, ի դեպ այդ օրերին Հայաստանը նաև նախաձեռնությունն ընդունել էր որոշակի անբարյացանությամբ⁴⁰: Հայ-բորբական սպամիցայի հարաբերությունների հասարակական մեկ այլ մարմեն՝ Թուրք-հայկական հաշուեցման հանճնամդուլի ասեղծամիջ մի բանի որ անց, CNN-Türk հեռուստաբեմկերության հովիսի 14-ի ուղիղ երեսում Թուրք-Հայկական գործարա- յության զարգացման կոմիտեի բորբական կողմից համանախա- սաւուն Շաան Սոյաքը շորջ մեկ ժամ տևած հարցագրույցի ըն- րացումը բնարկել է հայ-բորբական հարաբերությունների զա- նական իմանախնիքները, որի մեխն է եղել ավյուղահայերի տորիխտական ներուժը: Նշվել էր, որ 150 հայ գրոսարշդիկներ Արևմտյան Հայաստանով քրացայելու համար մասնակի էին ծոտ 1 միլիոն դոլար: Անդապատճեալով Հայաստանի նկատ- մամբ բորբական պաշտոնական դիրքորոշմանը՝ Սոյաքը իր խնդիրը շխանարկ Անկարայի պաշտոնական տեսակնոր մեկ- նախարակը, այլ նշեց, որ ամեն ինչ պիտի արփի տարածաշրջա- նային համագործակցությունը զարգացնելու նպատակով: Հե- տուստափառությունից մեկի՝ հայկական բորբի գործունեությանը վերաբերության հարցին ի պատասխան գործարար նշեց, որ լոր- իստական խճերը ներկայացնում են հայության միայն 20 տո- կուր, և որ Թուրքիան խնդիր տեի կապ հաստատել այլուրա- հայության մնացած 80 տոկոսի հետ, հանուն հենց ապագայի⁴¹:

* * *

Սեր ուստանափառությունը խնդիրներից է տալ հուստորա- կան դարձած «հնարավո՞ր» է արդյոք հայ-բորբական երկխո- սություն» հարցի պատասխանը: Եսկ այս հարցին պատասխա- նելին խկասես պեսոր է: Ազգամիջան երկխոսության խնդիրն առանձնակի կարեռություն առացալ 2000թ. աշնանը, եթ ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պատառը բնարկում էր Հայոց

³⁷ Turkish Probe, Dec., 1999.

³⁸TABDC activity Report 1997- Present, www.tabdc.org.

18

³⁹ AIM, 10 March, 2001.

⁴⁰ Է. Çeviköz, նշվ. աշխ., էջ 14.

⁴¹ Ազգ, 21/07/2001:

գեղասպանության ճանաշման բանաձևը: Ավրջինիս շորջ ընթացող թնարկումների սկզբից էլ պարզ էր, որ խորհրդարանարացող թնարկումները ժողովայի համար աննպաստ ընթացք էին կան կամ կամ կամ ժողովայի համար աննպաստ սահմանադրության սահմանը: Պաշտոնական Անկարան կրկին շրջանառության մեջ մտցրեց իր կողմից լայնորեն կիրարվող բաղադրական միջազգային մեջ՝ շահնամքը և հասավ նրան, նախագահ Թիգրան Բաշինը 2000թ. մասնաւոր թիգրան 18-ին առանձին ուղերձում դիմել Քիշինևում 2000թ. մասնաւոր թիգրան 18-ին առանձին ուղերձում դիմել Հայութիքին: Ներկայացուցիչների պատասխ խոսնակ Հայութիքին: Քիշինևում ուղերձը խոսնակի ուշադրությունն էր իրավունք ԱՀՆ-ի արտաքին բաղադրական գերակայությունների և շահերի վրա, ասելով. «Աներ Ենակավայի շահեր ունենք այլ բարդ աշխատազրական զոտում, այն է՝ զավել Արևելի և Կենտրոնական Ավագայի կողմից եկող սպասնակիրները, կայունորոյն հասկան Ավագան և այլ աշխատավոր տարածություններում և հայրային Եներգավիճերների նոր աղբյուրներ: Օդինագիր քննարկումն այս անհանգիստ ժամանակաշրջանում բացասաբար կանոքադրանա բոլոր այս շահերի վրա և կծախսող Հայաստանի ու Թուրքիայի միջև հարաբերությունների բարեկամանն ուղղված (նաև օրինագիր կողմանը կիցների) ջանքերին: Ես լիովին համանուն եմ, թե որքան սուր են ընկալում Թուրքիան և Հայաստանն այս խնդիրը: Ավրջին հաշվով, այս ցանկու խնդիրը կարող է լուծվել միայն այն դիպական աղքատությամբ, որը երկու կողմերը միախիս թնանեն իրենց անցյալը»⁴²: Երբում, եթե երկու կողմերը միախիս թնանեն իրենց անցյալը, ապա պատրիարքների միջև դիվանագիտական հարաբերությունների գլխանազիտուրյան պայմաններում փորձարկվեցին հասանական գլխանազիտուրյան, կամ այլ կերպ ասած երկրորդային գլխանազիտուրյան (second track diplomacy) միջոցով երկախոսություն հասանաւուր կնարավորությունները: Այդպիսի երկախոսություն իրականացնող միավոր պիտի դառնար Թուրքական հաշվեցման հանձնաժողովը:

Այս առումով նախականաբար ենք գտնում ներկայացնելու ազգամիջան երկխոսության վերաբերյալ իրապարակում եղած տևակետներն ու մոտեցումները: Եվ բանգի Հայաստան և Թուրքիայի պաշտոնական տևակետներին արդեն անտանի և Թուրքիայի պաշտոնական տևակետներին արդեն ան-

դրադարձել ենք թնարկենք ազգամիջան երկխոսության վերաբերյալ գիտական և հասարակական շրջանակներում առկա որոշ տեսակետները և մոտեցումներ:

Թուրք հասարակությունում ազգամիջան երկխոսության շատագով կարելի է համարել զիտնական մասներ Արշամին: «Այս ուրաքանչական հարաբերությունների անհրաժեշտության Արշամը պատասխանում է հարցով. «Ինչ պարզո՞ք կա մեկ այլ տարրերակ քան երկխոսությունը»⁴³: Պատասխանը հեղինակի համար միամիշանակ է, հայկական և բուրքական կողմերը, ինչպիս ոչ առանց դժվարության, պիտի սկսեն միջանց ընդուույ բայցը կատարեն: Արշամը նկատել է, որ չնայած բորբական հասարակությունը մվել էր հարդարական «հայկական տարուն», երկվորդ հարաբերությունների առողջությունը գործնարար և առաջ շարժվում: Իսկ երկխոսությունը խարարութ պայմանի պատճառներից նշվում է բուրքական ԱՀՆ-ների դիրքորոշումը, որում շարունակում են հասարակական գիտակցության մեջ բշնամաճ սերմանել հայ ժողովոյի նկատմամբ:

Թանելու Արշամը երկխոսություն սկսելու բաղադրական որոշումն ընդունելու պատասխանատվությունը դնում է բուրքական իշխանությունների վրա, սակայն, ըստ նրա, ազգամիջան ընթուիլ լուծումը պիտի փնտուն և բորբերը, և հայերը⁴⁴:

Թուրք գիտնականն անբարապանում է նաև երկվորդ հարաբերությունները պայմանագրով անկյունաքարային խնդիրն՝ «այս ցեղասպանությանը: Հարցին անբարապանակիս Արշամը կշնորհ մի ետարին դնում է հայերի կողմից Հայոց ցեղասպանության ճանաշման համար մզկող պայքարը, մյուսին՝ բորբական կառավարության շարունակական մխտումը»⁴⁵: Ուստինամիրովի կարծիքով, չնայած խնդրությունները: Այդպիսի երկախոսություն իրականացնող միավոր պիտի դառնար Թուրքական հաշվեցման պիտի բարողի ազգամիջան երկխոսության անհրաժե-

⁴² Լ. Բարսեղյան, «Ամերիկայի Միացյալ Նահանգները. Հայոց ցեղասպանության և բուրքական հակագեցությանը», Երևան, 2001, էջ 64:

ներն ու պահանջները Թուրքիայից, բարոյականից դրանք պետք էր տեղափոխվեն միջազգային իրավական հարթություն⁴⁹, ավելին, «Այօր Երկխոսությունից խոսափել, նշանակում էր պարտվել, իրաժարվել պայքարին»: Մի բան, որը չի կարող ների մեր ծովովուրդը: Ընդհակառակը՝ առիր էր ներկայացնում կրկին անգամ միջազգային հանրությանը նկայացնել ճշգրտությունը Հայոց ցեղասպանության մասին»⁵⁰: Լ. Բարսեղյանը ճշնարստացիորեն զոնում է, որ Երկխոսության արդյունավետությունը չշշտավիրեն կրաքրանա, եթե այդ գործընթացի դեմք ստանձնեն Հայաստանի և Թուրքիայի պետական մարմինները:

Հարաբերությունների կարգավորման մեկ այլ տեսական մողել է ստացարկում հայացքի պատուարան Արմեն Այվազյանը: Հայաստանի և Թուրքիայի միջև դիմանափառական հարաբերությունների բացակայությունը զնանառելով որպէս Հայաստանի Հանրապետության նկատմամբ Թուրքիայի կողմից ցացահայտ թշնամների ցուցադրություն, Ա. Այվազյանը երկուուր շփումները դիմարկում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության տեսանկյունից: Նրա կարծիքից պէտք Անկարայի նկատմամբ Երևանի բայարսականությունը պիտի կառուցվի մի կողմից Թուրքիայի վայ ճեղուածառությանը մուս կողմից բուրքական ճեշնամար հակազդելու սկզբունքների վրա: Ըստ Այվազյանի, «Հայաստանը պիտի միշտ իիշի, սերուի և շարունակի ուստինաբեկ իր հայրենիցի ամբողջական պատմություն ու աշխարհագրությունն, ներառյալ Հայոց պատմությունը»:⁵¹ Վերահսկելու ու վերաբերական համայնքների վերաբերությանը, միաժամանակ, սակայն, գլուխցելով, որ իր ումերից Եղիշենք, իսկ հայրենիքի Թուրքիայում մնացած 9/10-րդ հատվածի վեր էր հայրենիքի Թուրքիայում անցած պատմությունը:

Ինչ վերաբերում էր Հայոց ցեղասպանության ճանաշ-

ման հարցին այն, ըստ Այվազյանի, «ավետը կը րողնել բորբա-կան հասարակության խմբի վրա: Այդ ճանապարհը ավելի սուազ կը երի Հայոց ցեղասպանության ճանաշմանը Թուրքիայում, բայց բացահայտ ճնշմանը գործադրությունը»⁵²:

Ուստինաբերոյնի այս կարծիքի հետ դվյար է համաձայնվել, բորբական պետությունները Հայոց ցեղասպանության միջազգային ճանաշման ցանկացած փորձ գնահատում է որպէս պաշտոնական Անկարայի վրա կատարվող ճնշման փորձ: Ա. Այվազյանը չի մատնաճշում Հայաստանի ճանան գործելամբարի դեպքում Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաշման որևէ հնարավոր չարժեքավորությունը:

Հայ-բորբական հարաբերությունները ծովովուրդների լյանքում հասարակական ցեցուների տեսանկյունից դիտարկում Գ. Խոնզիբերին Երկխոսության վերաբերյալ իր որույն կարծիքը իր արտահայտում: Վերջինս համագետնություն էր հայտնում, որ թշնամներին վերջ կորվի այնժամ, եթե Սամարբուրում լրացվի այն անհուն հայ աղջկա հուշարձանը, ով թշունի վերադասեց մահը իր ընտանիքի հետ միասին, բայց կանը ստանց երանց, իսկ Երևանում՝ այն անհունու բուրք աղջնակի հուշարձանը, որը փանգելով սեփական կյանքը փրկել էր հայերի կյանքը: «Այդ թշնամանքին վերջ կորվի այն ժամանակ, եթե բուրքը ծովովուրդը անկեղծորեն կղզա 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի իր կատարած հանցագործությունների համար: Առանց այդ անկեղծ զրդումի բուրքը ծովովուրդը ապաց չունի: Այդ թշնամանքին վերջ կորվի, եթե հայ ծովովուրդը ների գքացող բուրքը ծովովուրդին (առանց գքացումի չի կարող ինչնել ներւում)»⁵³:

Երկխոսության համար անհրաժեշտ պայման է, որ այն ներառի հասարակության հնարավորին լայն խճեր, այն խոկ պատճառով անհրաժեշտ է Երկխոսությունը վարել լայն ճակատով: Թուրքական Ռուբեն Սահմանականի կարծիքով՝ «Երկխոսությունը հասարակական տարբեր խճերը միջն անդամականություն»:

⁴⁹ Լ. Բարսեղյան, «Հայ-բորբական հաշտության հանձնախմբի» ստեղծանման կոստանդնուպոլիս, էջ 12:

⁵⁰ Լ. Բարսեղյան, «Անեթիվային Միացյալ Կանանքները. Հայոց ցեղասպանության և բարբական հակասությունները», Երևան, 2001, էջ 83-84:

⁵¹ Ա. Այվազյան, նշվ. աշխ., էջ 78:

⁵² (Լ. Այվազյան, նշվ. աշխ., էջ 78):

⁵³ Г. Комизурин. Социальные потрясения в судьбах народов, Москва, 1997, стр. 285.

է: Այն հնարավորություն էր տալիս, որ երկու ժողովորդները կամ շնորհանան և քննամուրյունը չափնանա... ի վերջին ապահովությունը ներ և պարտավոր ներ գտնել ճանապարհները (ինչպահանջնով մեր մոռեցումները և հասկացողությունները), գտնել եզրեր նորմա համագործակցելու համար... երկխոսությունները հնարավորություն ներ տալիս, որպեսզի երրական հասարակությունը ծանորանա մեր խնդիրներին».⁵⁴

Սեր Կարձիբով, Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունները վաղ թէ ոչ պիտի կառուցվեն որակական նոր իիմքի վրա: Հարևանից շնորհ մասնաւոր հնարավոր էր միայն այն դեպքում, եթե Թուրքիան քաջորդյուն ունենա բնդությունը Հայոց ցեղասպանությունը: Ընդունել և իրավամբ զղչալ: Այժմ վիճակը տրամագծորեն հակառակն է: Ժամանակին խնդրու առարկային անդրադառնարվ, նշել էինք. «Շարունակելով նմանօրինակ քաղաքականությունը Հայաստանի համեմատ՝ բորբական կողմքը ոչ միայն չի բոլոցնում, այլև ավելի էր սաստկացնում երկկողմանի անվստահությունը և անհանդուրժողականությունը: Ի՞նչ գործենակերպ պիտի որդեգրի Հայստանը, չ՞ո բազմիցս հայստարարվել էր Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունները սկսելու հայկական կողմից ցանկության մասին... Թուրքիայի հետ դիվանագիտական հայտարարությունները հաստատելու համար պաշտոնական Երևանը չի կարող գնալ պատմական մանկությանը, ինչպես նաև ոչ վաղ անցյալի հերոսական գոյամարտի արդյունքները փաշխացնելու ողով: Արդյոք դա՝ էր գորակացման և ինտեգրացման մարտահրավերը և պահանջը: Կարծում եմ հարցեր են, որոնք առայժմ պատասխաններ չունեն: Հաշտեցման տեսապատրասերներ նկարելը շատ ավելի ենշատ է, քան դրանք կյանքի կոչելը: Հայ-բորբական հարաբերությունները մտել են խոր փակութի, և զգնաժամի խորացման պատասխանությունը լիովին ընկերությունը էր Անկարայի դոգմա-

տիկ ու անարդյունք քաղաքական գծի վրա»⁵⁵:

Այժմ անդրադառնանք ազգամիջյան հարաբերությունների բարեկաման նկատումներ ունեցող Թուրք-հայկական հաշտեցման հանձնամեռովի գործունեությանը, որի ստեղծումն անզամ ծնեց անպատասխան հարցերի մի ամբողջ շղթա:

⁵⁴ Ռ. Մաֆրաստյան. Հնարավոր չ 21-րդ դարում պատմենքներ ստեղծել հայրանների միջև..., Երևան, 2003, էջ 43:

⁵⁵ Ա. Անանյան. Հայոց ցեղասպանության միաման բարբական քաղաքականությունը հայ-բորբական հարաբերությունների համատեքսում, «Քարտու» 11, 2002, էջ 15:

ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՇԹԵՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՄ ՍՏԵՂԾՈՒՄ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Թուրք-հայկական հաշթեցման հանձնաժողովի (ԹՀՀՀ) հիմնադրման մասին հայտարարքը 2001թ. հուլիսի 10-ին: Իր ստեղծման պահին այն միավորում էր վեց բորբ և չորս հայ գործիչներ: Հայկական կողմն հանձնախմբում ներկայացնում էին՝ Ալբանուր Արզումանյանը (ՀՀ նախկին արտօնութեանախար և ՀՀԸ Կոստակցորյան առաջնորդ), Դավիթ Հովհաննիսյանը (Միքայած 1992-1998 ՀՀ նախկին դեսպան, հասուկ հանձնարարություններու դեսպան), Անդրանիկ Միքայանը (քաղաքական, Ռուսաստանի հայերի միուրյան փարզության անդամ) և Վան Գրիգորյանը (Ամերիկայի հայկական համագումարի հոգարածուների խորհրդի նախագահ): Թուրքական կողմից հանձնաժողովում ընդունված էին դեսպան Գյունուզ Արքանը⁵⁷, Ռաքուն Էրգուէքը, (Շողազի համապատաճ նախկին ուկտոր), ավիացիայի գեներալ Խոյենան Սամի Էրգուէքը⁵⁸, նախկին գլուխարտործնախարար, Մեծ Քրիտանիա-վենչը⁵⁹,

* Ռուսական է, որ ԹՀՀ անդամ Գյունուզ Արքանը «յորմիվ» և մատնառ Հայոց ցեղասպանության խնդրին: Այլ «յորմինակարգություն» ոչ այլ ինչ է բան թուրքական կողմից Հայոց ցեղասպանության ժխտման բարարակա նոր չափով: Արքանն առաջ է բարձր այն բյոր տեսակներ, իր մնաց Յնանապանության հանցագործության մասին 1984 թվականի կոնվենցիայի տմբ մնաներ, այն նահանգործություն չի հանդիպել: Փաստում բորբ իրավաբանը ներազրություն է, որ մինչև Վերմջան փաստարք թադարակ մնանուց պետական մասնակից ներազրությունը մնանիշան իրավունքը: Եթ աշխատություններում Արքանը մնանական խոսակամ է անդապանա բարեկամ պաշտօնական տեսակետը զինարարության հայության մասնակիցների վերուժությունը տևն, Յ. Գ. Բարսեցով, Տյուրքական դոկտրինա մеждународного права на слугоек политики генонида, Москва, 2002:

«Ազգ» օրաթերթի 03/10/2001թ. համարում բացահայտվում է այս անձնագործության միներ, իրականու պաշտօնարող գեներալ անմանը ու թիվ Սամի և, այլ Ծայի (Խովհաննաբար շփորությունը տևել է գտն բարեկամի Տ և Տ Սամիի տարբերեցման պահանություն): Արքինը 1981թ. հուլիսին, դժուակ գեներալ-մայորի գլուխարտական աստիճանում գրադարձը է անվտանգության խորհրդի և բորբական գնդիւած ուժերի գլխավոր շտաբի հետախուզության խորհրդի:

յում թուրքիայի նախկին դեսպան Օզինմ Սաներեկը, իովերան վաճիկ վելկանը, բորբական արտաքին գործերի վերատեսչությունը զեկավարած Խրեկ Թուրքի թուրքինը: Հանձնախմբի կազմն ու անդամների թիվը ենթապայմանական կրել են փոփոխություններ, որոնց կանոնադրության ստորև: Հանձնախմբի աշխատանքներն ի սկզբան է համակարգել է ամերիկացի բայսությանը Դայմիլ Ֆիլիպարը: Հատկանշական է, որ այս նախաձեռնությունը ոչ կատարարական մակարդակով բորբերին և հայերին հաշտեցնելու ստացին քայլը չլր. համաձայն «Երկիր» օրաթերթի դեռևս 1970-ական քվականներին բորբական կողմը փորձ իր արել անցան բանակցությունների մեջ մտնել Հայ եւղափոխական դաշնակցության հետ, սակայն դաշնակցականները պնդել էին բանակցությունների գործընթացն մասնակցեն նաև Սվյատոստ գործությունների ընթացքում պահանջական կուսակցությունները: Շանհակցությունների ընթացքում վերջիններն առաջ էին քաշել Անկարայի համար փակուղային պայմանները, բանակցությունները ձախողվել էին⁵⁷:

Հայ մամուլի իրապարակումների և հանձնաժողովի անդամների տված հարցագործությունների, նախապատրաստական փուն ընթացել էր հոյժ զարդարն և տևել է մի քանի ամիս, որոնց ընթացքում, մարտին և ապրիլի վերջ-մայիսի սկզբին, Վլիսննայում տեղի են ունեցել երկու աշխատանքային հանդիպուններ⁵⁸: Հանձնաժողովի ստեղծությունը բարուն հարցականներ ծննց, որոնցից մեկը կոչվին ատելածան շարժադրն էր:

Այս հարցի վեռ լոյս սփուրյու անհրաժեշտությունը, թիրես, ստիպեց, որ ԹՀՀ-ի հիմնադիր, նախապահող և գաղափարական Դեյմիլ Ֆիլիպարը բորբական «Շայիլիկա» պերը ներկայական կազմակերպության առաջնորդ անդաման անհրաժեշտությունների կազմակերպության առաջնորդությունը տևել է անհրաժեշտությունների վերաբերյալ:

Խամատեա վարչության վետի պաշտոնը և գործում մասնակցություն է տևել պատմական ծննդարտերյան մենակալիութան աշխատադրյումների լոյս ընթացման գործում: Արքինը անում շրջանավայր է Նորշեն Սազգչինի 1987թ. Սատարում հրապարակված «Հայկական հարդ ակրներեր» ուսումնակրությունում: Հետինակը իր գործ ակրու աշխատանքային համայնք է մտնել գեներալի հետ:

Երկիր, 18/07/2001:
* Խոյին տեղադրություն:

րյունը: Իր իրավարակման մեջ Ֆիլիպսը փորձում էր ապացուցել հայ-թուրքական հաշտեցման օգտակարությունը: Ըստ նրա Թուրքիայի պետական շահերից է, թիսում Հայաստանի հետ սահմանի վերաբացումը: Դ. Ֆիլիպսը կարծում է, որ նորմալ առևտրատնտեսական կապերը կուժեղացնեն թուրքական դիրքը տարածաշրջանում, ինչ համար կան իրավաբայմանագրային բոլոր իրենքը: Հայաստանը թուրքական սպառաճների շուկա է, հանդիսանում է և ներարդում է, որ սահմանի բացումը կիրանի սպառաճաշրջանառության աճը՝ կազմելով մոտ մեկ միլիարդ դոլար: Ի դրամ վերըշշայի, դա միևնույն ժամանակ Թուրքիան կարգները Եվրոպան Ասիային կապող անվտանգին կամարը: Դրանց հետո իրավանարդյանը մոտ կլինի բոլոր զորդարարների այն կանխատեսումը, որ «մետարսի ճանապարհը» 21-րդ դարում Թուրքիայի զարգացման քելումն է: Թուրքական իրավաբանները հղում կատարելով Սովորված պայմանագրային համակարգի վրա, ճանավորության կարդ պայմանագրի 17-րդ հոդվածն ասում է, «Պայմանագրով վոր կոմերս իրենց երկրների միջև հաղորդակցությունների անընդհատությունն ապահովելու նպատակով պարագարգություն ն փոխադարձ համաձայնությամբ ծեռ առնել բոլոր անհամելու միջոցները, որպեսի պահպանվեն և որքան հենարավոր է արագ զարգանան երկարության հետագրային և հաղորդակցության մյուս միջոցները, ինչպես նաև այն ճափառակով, որ պեսից առանց որևէ կասեցումների ապահովվեն մարդկանց և սպառաճների ազատ փոխադրումները»⁵⁹: Համաձայն Պայմանագրերի իրավունքի մասին Վկիննայի կոնվենցիայի և Իրավասահորդ պետությունների մասին կոնվենցիայի սույն պայմանագրերը պիտի սպասարկեն նաև այսօրվա հարաբերությունները: Խնդիրն, ըստ հոդվածագրի, որոշ ժամանակ բռնպակած էր բոլոր այն նույնության հետում, որ սահմանի բացումը կարող է տարածարյան պահանջների տեղի տա հայերի կողմից, այսպիսով 2001թ. վետրվարին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հայուսարդությունն առ այն, որ Հայաստանը

Թուրքիայի նկատմամբ տարածարյան պահանջներ չտնի միտված էր փարատելու այդ կասկածները: Փաստորեն ԹՀՀՀ-ի համակարգով միայն 2003թ. հանդիս գաղով իրավարակումն ներկայացնում է այժ իրական հետարքությունը, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներն ունի այս տարածաշրջանում: Դեռևս 90-ականներին անզիլացի հայկական ԱԻՄ հանդեսի տարածած բազում տևելակատուրյունները քմբկահարում էին հայ-թուրքական հարաբերությունների բարեկաման ԱՄՆ-ի առանձնավոր հետարքություն մասին: Սադր պահանջամատ ավարտից հետո, անդադանանով ամերիկյան շահերին, քաղաքացւությունների մասին իր «Հավանատային մնել տախտակը» աշխատությունում առաջարկում է ավելի ակտիվ ներգրավվել համաշխարհային գործընթացներին: Հեղինակը մեր տարածաշրջանն անվանում է «Եվրասիական Բազկաններ», հաշվի առնելով այստեղ առկա ազգային հակասուրյունների ամբողջությունը: Եվ չնայած ԱՄՆ-ը տարածաշրջանից գտնվում է շատ հեռու (այս իրազրյունը հնարավորություն չի տալիս այստեղ գերակա դիրք ստանալ), սակայն այն միևնույն ժամանակ չափազանց հզոր է, որ շատրվի այստեղ ընթացող գործընթացներին⁶⁰: Այս պարագայում ամերիկյան շահերը հանգում են հետևյալ դրույներին:

- Տարածաշրջանը իր համար դարձնել բաց և կանխատեսելի:

Ապահովել այնպիսի իրավիճակ, եթե որևէ գերաներություն չկարողանա վերահսկել Կովկաս-Կենտրոնական Ասիա տարածաշրջանը: Համաշխարհային հանրությունը պիտի անարգել ֆինանսատնտեսական մուտք ունենա տարածաշրջան: Այս ամենը հնարավոր կդառնա միայն նավթամուղերի և ցանքային տրանսպորտի այլ միջոցների անխափան աշխատանքի դեպքում, որոնք տարածաշրջանը պիտի կապեն համաշխարհային տնտեսական կենտրոնների հետ⁶¹:

⁵⁹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սպասարկան արտաքին բարպարականության վաստակած առաջարկը:

⁶⁰ Դ. Եզէջինսկի, Վելիկալ տախմատա ձուկ, Մ., 1999, սր. 149.

⁶¹ Դույն անդրադարձ:

⁶² Դույն անդրադարձ:

նվազեցնել նաև անցյալի իրողուրյունների ազդեցուրյունը երկկողմանի հարաբերությունների վրա: Բացահայտվում է նաև ԹՀՀՀ-ի անդամ տնտեսական ծուրքի կովկասյան քաղաքականությունն ամրոցացնելու և առաջ տանելու համար: Այս առումով տեղի է եղչել, որ նոյն Արքանը «աշխի է ընկեր» 2000-ին ԱՄՆ-ի կոնգրեսում իր հավահայկական հայտարարություններով: Արքանի կարծիքով հանձնաժողով նպատակ ուներ իր երկողմանի հարաբերությունների բարեկաման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել կառավարություններին: Ընդհանուր առմամբ բորբական նամուր նախաձեռնությունն հանարկ էր ողջունելի⁶⁸: Այդ մասին ևն վկայություրական մանուրում հայտնվող հրապարակումները և բորբերի գործիչների տեսականները խնդրու առարկայի վերաբերյալ: Օրինակ «Սիրիյեր» թերթի լրագրող Սամբ Քոհենը, խոսելով բորբական հարաբերությունների մասին, կրկին սրբ շշտառությունը՝ «Հայկական հարցի» վրա, նշելով, որ այն որևէ ստվեր չափուի ցցի երկիրող կապերի զարգացման վրա, սակայն միևնույն ժամանակ հողվածավիրը նախազուշացնում է, որ չափու և աշքարոյ արվի խնդրու առարկային առնչվող հարցերի շրջանակը: Հայոց ցեղասպանության ճանաշման արծարքման դեմ համայիր միջոցառումներ ձեռնարկելու կոչ անելով Քոհենը նշում է, որ Ֆրանսիայի կողմից ցեղասպանության ճանաշումից հետո Անկարան ոյնիշ շկսութացավ ձևոնարկի⁶⁹: Հանձնաժողովի ստեղծման անմիջական նախաձեռնությունը, ոչ առանց իիմնավոր փաստարկների, վերլուծարանների մեծամասնությունը կապում էր ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտի հետ, չնայած ի սկզբան արփած էր ամեն ինչ նմանօրինակ Անքարությունները բացառելու համար: Հանձնաժողովի անդամների պնդմամբ՝ նախաձեռնությունը Վիեննայի դիվանագիտական ակադեմիան և Ժնևի հումանիտար ինստիտուտն են՝ մասնակցությամբ այլ հասարակական կազմակերպությունների⁷⁰: Սակայն այս գործընթացում

իրական դերակատարների ներգրավվածությունը ապացուցվեց ավելի ուշ, երբ «Առնօքնական հետազոտությունների ծառայություն» իր 2001թ. հոկտեմբերի 2-ի շրջու էջանոց «Ուորքինգական հաշտեցման հանձնաժողովը և ԱՄՆ-ի դեր» հայդրագործյան մեջ նշեց, որ «ԱՄՆ-ի պետքարտամանությունը է տրամադրում ԹՀՀՀ-ի գործունեաւրյանը, ինչպես այլ հասարակական նախաձեռնությունների...»⁷¹: Ինչպես նշել էր «Ազգ» օրաթերթի այլ տեղեկատվությունը տրամադրյան ՀՅԴ Հայ դասի Վաշինգտոնի գրաւունյակի մամբ պատասխանառու Եղիսաբեր Շուշյանը, ԱՄՆ-ի Պետողակարտամանությունը ԹՀՀՀ-ին ֆինանսական օժանդակություն է տրամադրել, բայց անողոյակիրքն ավետիպարտամենությունը գումարը տրամադրյալ է, Վաշինգտոնի ամերիկյան համալսարանին, վերջին, հակամատությունների կարգավորման ծրագրի շրջանակներում դրամաշնորհի ձևով, գումար որ փոխանցել է ԹՀՀՀ-ին: Չնայած «Կոնգրեսական հետազոտությունների ծառայության» հասորդագրության մեջ դրամաշնորհի շափու նշված չի եղել, սակայն թերթը Սոսկիլյայի⁷² «Առողջապահության» կազմակերպությամբ մոտ կանգնած մի առյուրից տեղեկացել էր, որ Վաշինգտոնի ամերիկյան համալսարանի միջոցով ԹՀՀՀ-ին հատկացված գումարն այնքան է, որքան Նորեկյան մրցանակը: Նոյն տեղեկությունը մի քանի անգամ նշել են այլ առյուրներ ևս⁷³: Համաձյան այդ առյուրների, ծրագրին որոշակի օժանդակություն են ցոյց տալիս նաև նրա իրականացման մեջ ներգրավված կազմակերպություններ:

Անրագավառադրությունը ԹՀՀՀ-ի ստեղծման վերաբերյալ ձևագրված հասարակական կարծիքին կոնդրեսական գեկուցագիրը փատուի էր, որ հանձնաժողովի ստեղծման բորբական սրձագանը քայլել է, գերազանցապես դրական», մինչդեռ հայկական՝ «եղիս և ավելի շատ բացասական, քան դրական»⁷⁴:

⁶⁸ Երկիր, 13/07/2001:

⁶⁹ Milliyet, 11/07/2001.

⁷⁰ Առավտու, 14/07/2001:

